

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1931 - Սեպտեմբեր - Նոյեմբեր - թիւ 9-10
էջ

ԽՄԲ. — Հայ Մշակոյթը - Ոսկեդէն դա-
րուն հոգին - Եփեսոսի Ս. Ժողովը . . . 385

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

ԱՄԱՏՈՒՆԻ Հ. ԿԱՐԱՊԵՏ. — Եփեսական
դաւանութեան աստուածաբանական ցոյցա-
ղրութիւնը 387

ՓԷՉԻԿԵԱՆ Հ. ԵՂԻԱ. — Եփեսոսի Ս. Ժո-
ղովը և Հայ Եկեղեցին 412

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔԻՐԵՏԵԱՆ Յ. — Վիշապը Հայկական գոր-
գերուն մէջ 417

ՍԱՅՐԱՍՏԵԱՆ ԱՐՇԱԿ. — Հայ ցեղի ծագ-
ման խնդիրը 426

ՆԱԶԱՊԵՏԵԱՆ Հ. Գ. — Քրիստոնէական
ճարտարապետութիւն (սլաւոնական հետազո-
տութիւններ) 434

ԳՐԱԿԱՆ (Սրբազան)

ԵՐ. ՏԵՐ ԿՈՍՏԵԱՆ ՔԷՆՅ. — Տաղ ի Ս.
Աստուածածինն 409

* * Տաղ Ս. Աստուածածինն (Յորդորակո
քաղցր և անոյշ) 410

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐԵՏԻ. — Տաղ առ Ս.
Աստուածածինն 411

ՓԷՉԻԿԵԱՆ Հ. ԵՂԻԱ. — Տիրամայր . . . 411

ԳՐԱԿԱՆ (Աշխարհիկ)

ԵՐԵՄԵԱՆ Հ. Ս. — Դանիէլ վարուժան . 442

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ԵՐԵՄԵԱՆ Հ. Ս. — Վահրամ Սօֆեան -
Մալխաս 448

ԿԻՐԵՂԵԱՆ ՓՐՈՅ. Լ. — Երկհազարամ-
եակ մը (վարդան ու Աշկերտը) 456

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ԽՄԲ. — Գերպ. Աւետիս Արփարեան ար-
քեպիսկոպոս ընտրուած Կաթողիկոս - Պա-
տրիարք՝ Կաթողիկէ Հայոց 454

SOMMAIRE

1931 - Septembre - Octobre - numéro 9-10
p.

Réd. — La culture arménienne - L'es-
prit du siècle d'or - Le Concile d'Ephèse. 385

THEOLOGIE

Amadouni P. Garabed. — Exposition
du dogme du Concile d'Ephèse . . . 387

Paitchikian P. Elie. — Le Concile
d'Ephèse et l'Eglise Arménienne . . 412

PHILOLOGIE

Kurdian H. — Le Dragon dans les
tapis arméniens 417

Safrastian A. — Recherche de l'ori-
gine de la nation arménienne . . . 426

Nahabédian P. G. — L'architecture
des églises (recherche historique) . . 434

LITTERATURE SACRÉE

Le bienheureux Der Gomidas. — A
la Mère de Dieu 409

* * A la Mère de Dieu 410

Krikoris Aghtamartzi. — A la Mère
de Dieu 411

Paitchikian P. Elie. — A la Mère
de Dieu (poesie) 411

LITTERATURE PROFANE

Erémian P. S. — Daniel Varoujan . 442

RECENSION

Erémian P. S. — Vahram Sofian -
Malkhas 448

Gurékian Prof. L. — Virgile (pour le
bimillénaire) 456

ECHOS d'ARMENIE

Réd. — Mgr. A. Arpiarian élu Patri-
arche (Catholico) des arméniens catho-
liques 454



1843-1931 ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՆՈՅԵՄԲԵՐ ԹԻՒ 9-10

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՀԱՏՈՐ ԶԹ ԹԵԶ-ԹԵԶԵ

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԸ - ՈՍԿԵՂԷՆ ԴԱՐՈՒՆ ՀՈԳԻՆ

ԵՓԵՍՈՍԻ Ս. ԺՈՂՈՎԸ

Մեր տարեկան տօներուն մէջ ամէնէն
խնքնատիպը, ամէնէն ազգային ու
հրաշափառ՝ Թարգմանչացն է. Հայ Գրի
տօն, Հայ քաղաքակրթութեան պանծա-
ցում, Հայ Յեղի յաւերժացման գիւտ, Հայ
Եկեղեցւոյ սրբակերտութիւնը՝ լեզուական,
ճիւղական եւ հարազատ յղացումներու ըզ-
մայլելի կառուցումներով, որոնց համար իսկ
մեզի այնքան սիրելի եւ սրբազան է:

Անոր մէջ կ'աստուածանայ մեր Յեղին
ստեղծագործ ու կազմակերպիչ ոգին, Մես-
րոպի ու Սահակի պաշտելի զոյգ տիպա-
րներուն մէջ մարմնացած:

Մին՝ իր Յեղին անմահութիւնը կը վճռէ՝
հանճարի մէկ թափովը Հայ Գիրն ստեղծե-
լով: Ու Մեսրոպ կը պաշտուի Հայութենէն՝
պաշտամունքով մը որ կը նստմանէ հրաճին
Վահագնի ծիրանին ու արեգակները. Հայ
Հանճարի յաղթանակն է՝ Հայ Ուժին վրայ:

Հայաստան երբեք այդքան հարուստ, այդ-
քան երջանիկ չէր եղած:

Հայութիւնն ամբողջ երախտապարտ՝ կը
խոնարհի Սահակի ազնուական մեծութեան
առջեւ, որ իր մէջ կը բերեղացնէ հեղին
մտքի շնորհն ու կշռոյթը, եւ արեւելեան
ցեղերու յղացումն թռչելու երանգաւոր:

Ստեղծագործութիւն, հաւաքոյթ, յղա-
ցում՝ փայլակօրէն կ'իրագործուին, ու ան-
մահութեամբ կը պսակուին: Երեւոյթ՝ նոր-
օրինակ եւ սքանչելի զոր հայութիւնը հրա-
շագործեց. տեսան Յոյն եւ Ասորին, երանի
տուին հայ աշխարհին: Եւ խորհիլ թէ Յոյն
ու Լատին հսկայ ազգեր հնգեակ եւ աւելի
դարերու պատրաստութեամբ եւ աշխա-
տանքով էր միայն որ վերելակեցին մինչեւ
իրենց Ոսկի դարերու բարձունքը:

Եւ եթէ դարեր, ազգեր ու պատահա-
րներ մեր մշակոյթին դէմ մաքառին, ատով
սակայն ո՛չ կ'ընկրկի եւ ոչ կը լքանի մեր
ցեղը: Ամէնէն մօթն դարերու ծոցէն իսկ
ըյսի շառայներ պիտի ցուցնենք, ինչպէս
հինաւուրց Գողթնի քնարին նրբարուեստ

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԳՆԵՐՈՒՆ

Խմբագրութիւնս կը խնդրէ այն բաժանորդներէն, որոնք
ցարդ յետեւալ հաշիւներ ունին, փութացնելու անոնց
կարգադրութիւնը:

Թրմուումներէն, մինչեւ խորհնացոյն դիւ-
ցազներգութիւնը, Եղիշէի քնարականը,
Նարեկը, Քուչակը, իր վերածնողի շուն-
չին մէջ Մխիթար ու իր հետեւորդ փառ-
քերու շրջանը:

Այսքան մեծութեան ու փառքի գիտա-
կից՝ ինչպէս երբեմն Պարսիկ եւ Հոռոմ
հնշումներուն՝ այսպէս հայը կ'ընդլզիւմէն
ուժի դէմ որ կը յանդգնի կապուել իր
ազատութիւնն ու փառքերը, եղծանել իր
սրբութիւնները: Եկեղեցին՝ սին եւ հաս-
տատութիւն հշմարտութեան՝ սրբացուցած
է Հայրենիքը, լեզուն ու ծէսը՝ դատապար-
տելով միշտ ամէն զեղծարար ու չքաւոր
միտք որ մեր Հարց աստուածադիր սահ-
մանները կը փոփոխէ:

Եւ ընդդէմ հեծանոս ձգտումին՝ որ կը
ծառանայ իր հին ու ժամգոտած գէնքով
մեր հայրերու կրօնքն ու քաղաքակրթու-
թիւնը տապալելու, Մեսրոպի ու Սահակի
տիպարները կը վերակենդանանան, իր
փառքերով կը փայլատակէ Ոսկի Դարը.
կը պաշտուի գեղեցիկը լեզուն, հշմարտը
կրօնքն ու աստուածայինը պատգամնե-
րուն: Աստուածաշունչը լոկ — Թողունք բո-
լոր Ս. Հայրերու անբաւ շտեմարանը — ան-
մրցելի կոթողը կը կազմէ եւ իբրեւ հայա-
ցում՝ իր գեղեցկագիտութեան տեսակէտով
կը զարմացնէ ամէն ազգ: Մատենագրու-
թիւն մը որ արուեստի նրբութիւններով
տաճարներու եւ մագաղաններու վրայ դեռ
կենդանի՝ ամբողջապէս կրօնք եւ հաւատը
կը բուրբ, ծնող է եւ մայր մեր քաղաքա-
կրթութեան, որ գիտէ միանգամայն սրբ-
բազործել ինչ որ հնութեան տուրքն է:

Ու մենք մեր տարաբախտ համբուն վրայ
կը փարինք մեր Հայրերու գրերուն՝ զորս
վարդանի ու Եղիշէի եւ նմաններուն սուրբ
բերաններն են հեգեր առաջին անգամ ու
սրբագործեր. առաջին անգամ Աստուծոյ
խմաստութեան պատգամներն են որ հայա-
ցեր են անոնցմով: Ու այսպէս մեր մշա-
կոյթը Թրմուում ու հոգիացած է կրօնքով,
առանց որուն անկենդան դիակ մը կը մնայ:
Լուսաւորչի կանթեղին փայլով ու Օշա-

կանի շիրիմէն հառաքայթող հոգւով ու
գրերով պէտք է գրէ ամէն հայ, այսօր եւ
վաղը:

Մեր ոսկի դարուն կրօնական խորքին մէջ
պատմական կոթող մը կայ. կ'արժէ որ դի-
տենք զայն ու զնայինք: Տիեզերական Եկե-
ղեցին է որ խռոված է ի լուր հայհոյու-
թեանց Նեստորի՝ որ զՄարիամ պարզա-
պէս մարդածին կը դաւանի, ու այնպէս
մէկ Քրիստոսը մէկ հարուածով երկուքի
հեղքելով՝ կը ջնջէ մարդեղութեան խոր-
հաւդը ու հետեւաբար մեր փրկագործու-
թիւնը: Արեւելքէն ու Արեւմուտքէն ծայն
տալով՝ Եփեսոսի մէջ հաւաքուած Մի,
Ընդհանրական եւ Առաքելական Եկեղեցւոյ
«Հրաշալի Նախահարք, միշտ յաղթողը ի
մարտի... Նզովեցին զՆեստոր եւ զաղանդն
իւր պիղծ». Մարիամ՝ Աստուածածին հրո-
չակուած է. ու մարտին ակոյցեանը՝ Ս. Կիւ-
րեղ:

Հոս յիշենք սեւ կէտ մը: — Տիւշէն յան-
դգներ էր չքմեղել Նեստորը՝ որպէս զոն
Կիւրեղի քննախնդրութեան: Կամ. Եկե-
ղեցին չդանդաղեցաւ դատապարտելու այդ
մուկը վճիռ որ Ս. Կիւրեղէն զատ Տիրա-
մօր փառքին ալ կը դպչէր: Բայց ինչ զար-
մանք որ հայ պաշտօնական կրօնամեթոմ
օր մը նոյն Տիւշէնը վկայ ու Թարգման կը
կոչէր Կամ. դաւանանքին: Ուրիշ օր մ'ալ
հոն սեւ վճիռ մը կար Թէ Եկեղեցին ընդ-
հանրական — կամօղիկէ բլլալէ դադրած
է Դ-Ե դարէն:

Բայց այս չէ Եփեսական Հարց հաւատ-
քը, որոնց համախմբումին, պատգամնե-
րուն եւ Նզովքներուն մէջ բացորոշ է դա-
ւանութիւնը ի «Մի միայն Ընդհանրական
եւ Առաքելական Եկեղեցին», անպակասելի՝
Քրիստոսի անսուտ խօսքով:

Այդ ժողովը միայն, որուն 1500ամեակը
կը տօնենք, պիտի սորվեցնէ Քրիստոսի Ե-
կեղեցւոյն միութիւնն ու կազմը, եւ հետեւ-
պահէ Լուսաւորչի հաւատքը համաժողովե-
րէ, որոնց մէջ աստուածայինը կը պակսի:

ԽԽԻ

Ե Փ Ե Ս Ա Կ Ա Ն Դ Ա Ի Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Ա Ս Տ Ո Ի Ա Ծ Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն Ց Ո Ի Ց Ա Դ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Ս. ԳՐՈՑ, ԵԿԵՂԵՑԻՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ

ԱՂԲԻԻՐՆԵՐՈՒ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

〇〇

Տարւոյս ցայտուն դարադարձներէն է
ԵՓԵՍՈՍԻ ՏԻԵԶԵՐԱԿԱՆԸ, զոր փառահեղ
հանդէսներ, գիտական կաճառներ եւ հա-
մագումարներ պայծառացուցին:

Տասնեւհինգ դարեր առաջ գումարուած
այս Ժողովը, շնորհիւ վստահելի ծաւա-
լուն պատմական յիշատակարաններու՝
որոնք մեզի հասած են, դեռ այսօր իսկ
ամենամեծ շահեկանութիւն ունի:

Դաւանարանական ըմբռնումի բարձր
զարգացման հետ՝ Եկեղեցւոյ Նուիրապե-
տական կուռ կազմակերպութիւն մը եւ
համաձայն անձուկ միութիւնը՝ ոգին եւ նը-
կարագին է անոր:

Լաւ է համայնապատկերի մը մէջ նը-
կատել անոր նախապատրաստութիւնը,
յետոյ զլիաւոր գործիչները, եւ հուսկ
դաւանարանական եզրակացութիւնը:

Սպորդինար՝ Նիկիական
դաւանութիւնը Արիոսի
դէմ ջատագովելու բուն
թափէն, այսինքն Հօր
Աստուծոյ ծոցածին Բա-

նին աստուածութիւնը Քրիստոսի մէջ, մեր-
ժեց Քրիստոսի մարդկային հոգին, որով
կ'ունենար Աստուած՝ սոսկ մարմին եղած:
Բանական հոգւոյն բացակայութեամբ մի-
այն հնարաւոր կը համարէր նա անթերի
եւ անմեղանչական դաւանիլ զՔրիստոս:

Այս մոլորութիւնը 377ին Հռոմի Ժո-
ղով՝ Ս. Դամասոսի հայրապետութեան
օրով, յետոյ յաջորդաբար 378ին, 379ին
Աղեքսանդրիոյ եւ Անտիոքի սինհոդները,

եւ հուսկ 381ին՝ Կ. Պոլսի տիեզերական Բ
Ժողովը՝ դատապարտեցին: Ժողովներուն
ձայնակցեցան ժամանակակից Թէ՛ Արեւ-
ելեան եւ Թէ՛ Արեւմտեան Ս. Հայրերը:

Անոնցմէ էր որ անտիոքեան
Դիոդոր զարոցէն Սպորդինարի դէմ
ՏԱՐՍՈՆԱՅԻ պայքարելով՝ ընդդիմակ սը-
խալի մէջ գայթեցին: Դիո-

դոր շուրջ 330ին ծնած, 378ին Տարսոնի
եպիսկոպոս օծուեցաւ: Հիմնադիր՝ աղեք-
սանդրեան աշխարհական զարոցին մրցա-
կից Անտիոքի վարդապետական զարոցին,
որով տառական մեկնիչ մնալով հանդերձ՝
պատկերաւոր, խորհրդանշական ու մար-
գորեական հատուածներու՝ իսկական ի-
մաստը, ու դէպքերէն՝ բարոյական խը-
րատներ կը հանէր: Իրբեւ ուսուցիչ Ու-
կերեանի ու Թէոդոր Մոպսուեստացւոյն՝
հոյակապ մեկնիչներ կերտեց անոնց մէջ,
բայց եւ միանգամայն իր քրիստոսաբանա-
կան տեսութիւններով ճամբայ հորդեց վեր-
ջինիս, եւ աւելի անոր աշակերտին՝ Նես-
տորի քրիստոսաբանութեան երկառութեան:

Դիոդորի կարծիքով Բանը՝ Աստուծոյ
Որդին, առաւ ու միացուց իրեն Դաւթի
Որդին, այնպէս որ ոչ Բանը իսկապէս ու
ձգարտապէս Դաւթի ցեղակից եւ Մարիա-
մու որդի կարելի է կոչել, ոչ ալ Մա-
րիամու որդին՝ Աստուծոյ որդի, բայց եթէ
բառերուն շայն եւ աւելաւոր առումով միայն
եւ որդեգրական շնորհաց միջոցով:

Ահա դարձուածք մը նոր, խորք ու
խոտոր Ս. Գրքէն, եւ որ Քրիստոսաբա-